- Եթե օբյեկտիվ աղբյուրներից (օրինակ՝ լրատվական կայքեր, զեկույցներ) տեղեկություններ ունեք Ձեր ծագման երկրի, այնտեղ տիրող իրավիճակի մասին, ապա դրանք նույնպես ներկայացրեք հարցազրույցի ժամանակ:

Ի՞նչ իրավունքներ ունեք հարցազրույցի ժամանակ

- Կարող եք ցանկացած պահի ընդմիջում խնդրել, հանգստանալ, հոգալ Ձեր կարիքները, այնուհետև շարունակել հարցազրույցը:
- Կարող եք խնդրել դադարեցնել հարցազրույցը և հետաձգել այն, եթե հարցազրույցի ընթացքում Ձեզ վատ զգաք, կամ առաջանան այլ խիստ հիմնավոր պատճառներ, որոնք խոչընդոտում են հարցազրույցի անցկացմանը (օրինակ՝ հարցազրուցավարի կամ հարցազրույցի այլ մասնակիցների ընդգծված բացասական վերաբերմունքը Ձեր հանդեպ, սխալ թարգմանությունը, նախընտրած սեռի թարգմանիչ կամ հարցազրուցավար ներգրավելու ցանկությունը և այլն):
- Հարցազրույցին կարող եք մասնակցել փաստաբանի հետ, ինչպես նաև խնդրել հետաձգել կամ դադարեցնել հարցազրույցը, եթե փաստաբանը ներկա չէ: Դուք կարող եք դիմել պետության կողմից երաշխավորված ԱՆՎՃԱՐ իրավաբանական օգնության համար և ունենալ փաստաբան, որը կաջակցի Ձեզ ապաստանի ամբողջ գործընթացում:
- Եթե Դուք չեք խոսում հայերեն, կարող եք դիմել թարգմանչի ծառայությունների համար, որոնք պետք է Ձեզ ԱՆՎՃԱՐ տրամադրվեն Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

Ի՞նչ է անհրաժեշտ է իմանալ ընտանիքի անդամների հետ միասին միասնական դիմում ներկայացնելիս

- Ձեր ընտանիքի յուրաքանչյուր չափահաս անդամի հետ անցկացվելու է առանձին հարցազրույց:
- Հարցազրույցի ժամանակ կարող եք ներկայացնել այն վախերը, որոնք առաջացել են Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկի պատճառով, և այդ տեղեկությունները չեն փոխանցվելու Ձեր ընտանիքի անդամներին:

Ի՞նչ է հետևում հարցազրույցի ավարտին

- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցը կազմում է հարցազրույցի արձանագրությունը, որը Ձեզ համար ընթերցվելու է թարգմանչի միջոցով:
- Եթե հարցազրույցի արձանագրությունում նկատում եք սխալներ կամ անհրաժեշտ է ուղղումներ կամ ճշգրտում կատարել դրանում, ինչպես նաև եթե ցանկանում եք հավելյալ տեղեկություն կամ ապացույց ներկայացնել, հայտնեք այդ մասին հարցազրուցավարին և/կամ Ձեր փաստաբանին:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գրավոր դիմումի ձևը

Հայաստանի հանրապետության
փաստաբանների պալատի հանրային
պաշտպանի գրասենյակի ղեկավարին

Հայաստանի հանրապետությունում ապաստան հայցող

Անուն .....

Ազգանուն .....-ից

Դիմում

Խնդրում եմ ինձ հանրային պաշտպան տրամադրել ապաստանի ընթացակարգերում ինձ ներկայացնելու և խորհրդատվություն տրամադրելու համար:

Կից ներկայացնում եմ իմ՝ Հայաստանում ապաստան հայցողի անձը հաստատող փաստաթուղթը:

Ամսաթիվ..... Ստորագրություն.....

Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի հանրային պաշտպանի գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան փ., 7-2 շենք, 2-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 60 07 14 / +374 33 60 07 14
Էլ-փոստ՝ pashtpan@advocates.am
Կայք՝ www.hpg.am

Հայաստանի մարզերում Հանրային պաշտպանի
գրասենյակի հասցեների մասին տեղեկություններ
ստանալու համար այցելեք այս կայքէջը՝
https://www.hpg.am/am/site/Seats կամ
զանգահարեք Հանրային պաշտպանի գրասենյակ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան փ., 7-2 շենք, 4-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 60 07 01, +374 10 60 07 04
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով
գերագույն հանձնակատարի գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պետրոս Ադամյան փ. 14
Թեժ գիծ՝ 08000 0025
Էլ-փոստ՝ armyeprt@unhcr.org
Կայք՝ https://help.unhcr.org/armenia/

Funded by the European Union

UNHCR
The UN Refugee Agency

Սույն տեղեկատվական նյութը մշակվել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից՝ Եվրոպական միության (ԵՄ) և ՄԱԿ ՓԳՀ ֆինանսական օժանդակությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատու է բացառապես նյութի հեղինակը, և բովանդակությունը կարող է չարտացոլել ԵՄ և ՄԱԿ ՓԳՀ տեսակետները:

ARM

Ի՞նչ է հարկավոր իմանալ ապաստանի ընթացակարգում հարցազրույցի մասին

https://help.unhcr.org/armenia/

Ապաստանի դիմում ներկայացնելուց հետո Հայաստանի Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը Ձեզ հետ հարցազրույց է անցկացնելու՝ հասկանալու, թե ինչն է ստիպել Ձեզ լքել Ձեր երկիրը և ինչ կարող է պատահել Ձեզ կամ Ձեր ընտանիքի անդամներին, եթե վերադառնաք այնտեղ:

Ի՞նչ նշանակություն ունի հարցազրույցն ապաստանի ընթացակարգում

- Հարցազրույցի նպատակն է լսել Ձեզ և հասկանալ Ձեր մտահոգությունները՝ կապված Ձեր երկրում Ձեզ համար առկա վտանգների հետ:
- Հարցազրույցն ապաստանի ընթացակարգի ամենակարևոր փուլերից է, քանի որ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության որոշումը մեծամասամբ հիմնվելու է Ձեր տրամադրած տեղեկությունների և ապացույցների վրա:

Պարտադի՞ր է արդյոք մասնակցությունը հարցազրույցին

- Հարցազրույցին մասնակցելը պարտադիր է, և դա բխում է Ձեր իսկ շահերից:
- Եթե չեք կարող մասնակցել հարցազրույցին Ձեր կամքից անկախ պատճառներով, ապա **նախապես** կամ առաջին իսկ հնարավորության դեպքում **անհապաղ** այդ պատճառների մասին տեղյակ պահեք Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը:
- Եթե չեք ներկայանում նշանակված հարցազրույցին և մեկ ամսվա ընթացքում չեք ներկայացնում հարցազրույցին չներկայանալու հիմնավոր պատճառներ, ապա ապաստան տրամադրելու գործընթացը կարող է կասեցվել, իսկ հետո՝ կարճվել: Սա նշանակում է, որ Դուք գուցե այլևս հնարավորություն չունենաք վերսկսելու Ձեր գործի քննությունը:

Ի՞նչ պետք է անել նախքան հարցազրույցը

- Անհրաժեշտ է պատրաստվել հարցազրույցին, հնարավորինս կենտրոնացնել հիշողությունը և համակարգել մտքերը, անհրաժեշտության դեպքում նաև նշումներ կատարել, օրինակ՝ կարևոր տարեթվեր/ամսաթվեր, անձանց անուններ, տեղանուններ հիշելու համար:



- Պատրաստ եղեք պատմել Ձեր գործի հետ առնչություն ունեցող ամեն ինչ, այդ թվում՝ այն ամենը, ինչը կարող է Ձեզ ցավ պատճառել (օրինակ՝ ձերբակալության կամ բռնության դեպքի մասին):
- Քանի որ հարցազրույցը կարող է ձգվել մի քանի ժամ, Ձեր մյուս գործերը պլանավորեք համաատասխան կերպով: Տրամադրվեք և ֆիզիկապես ու հոգեբանորեն պատրաստվեք հարցազրույցավարի հետ միասին մի քանի ժամվա ինտենսիվ աշխատանքի:
- Դիմեք իրավաբանական օգնության և հարցազրույցին պատրաստվեք փաստաբանի հետ միասին:

Ի՞նչ տեղեկություններ է անհրաժեշտ ներկայացնել հարցազրույցի ընթացքում

- Հնարավորինս մանրամասն ներկայացրեք բոլոր այն պատճառները, որոնք Ձեզ ստիպել են լքել Ձեր երկիրը, և որոնց պատճառով Դուք չեք կարող վերադառնալ: Շատ կարևոր է պատմել հարցազրույցի ժամանակ այն, ինչ պատահել է Ձեզ հետ, Ձեր ընտանիքի անդամների հետ, ինչպես նաև Ձեզ հետ նույն իրավիճակում գտնվող անձանց հետ: Պատմեք այդ ամենը ամենայն մանրամասնությամբ, առանց ընդհանրացումներ անելու, հնարավորինս հստակ և կոնկրետ:
- Կարևոր է Ձեր հայտնած ցանկացած տեղեկություն: Պատմեք և բացատրեք Ձեր իրավիճակի մասին ամեն ինչ՝ առանց որևէ բան բաց թողնելու: Մի ենթադրեք, թե հարցազրուցավարը լավ պատկերացնում է Ձեր իրավիճակը: Նա կարող է որոշակի պատկերացում ունենալ Ձեր երկրում տիրող ընդհանուր իրավիճակի մասին, սակայն Ձեր իրավիճակը միայն Դուք կարող եք բացատրել նրան:
- Անցյալի դեպքերը ներկայացնելուց բացի, անհրաժեշտ է հանգամանալից բացատրել, թե Ձեր երկիր վերադառնալու դեպքում ինչ կարող է պատահել Ձեզ հետ, և Ձեր որ իրավունքներն են վտանգված:
- Համագործակցեք հարցազրուցավարի հետ: Հարցազրույցի ընթացքում և վերջում փորձեք հասկանալ՝ արդյոք նա լիարժեք պատկերացում կազմեց Ձեր երկրում Ձեզ սպառնացող վտանգների մասին և թե ինչ հավելյալ տեղեկություն կամ բացատրություն կարող եք տրամադրել այդ հարցում նրան օգնելու համար: Մի սահմանափակվեք միայն նշելով, թե ինչ է պատահել կամ ինչ կարող է պատահել. գործադրեք ամեն ջանք, որպեսզի հարցազրուցավարը լիարժեք պատկերացում կազմի Ձեզ սպառնացող վտանգների պատճառների մասին:
- Բացատրեք հարցազրուցավարին, թե ինչպես են Ձեզ սպառնացող վտանգները կապվում Ձեր ռասայի, ազգության, կրոնի, քաղաքական հայացքների կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելու հետ:
- Խնդրեք հարցազրուցավարին, որպեսզի հարցազրույցի ընթացքում կամ դրանից հետո Ձեզ տեղյակ պահի, եթե կարծում է, որ Ձեր տրամադրած տեղեկությունները բավարար կերպով չեն հիմնավորում Ձեր երկիր վերադառնալու հետ կապված Ձեր վախերը և հնարավորություն տա Ձեզ ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ:

ՀԻՇԵ՛Ք.

- Հարցազրույցի ընթացքում պետք է լինել անկեղծ և հայտնել բացառապես ճիշտ տեղեկություններ:
- Ապաստանի ամբողջ գործընթացը գաղտնի է. հարցազրույցի ընթացքում Ձեր կողմից հայտնած տեղեկությունները չեն փոխանցվելու Ձեր երկրի իշխանություններին:
- Տրված հարցի պատասխանը չիմանալու դեպքում պետք չէ կռահել այն. կարող եք ասել՝ «չգիտեմ» կամ «չեմ հիշում», եթե դա իսկապես այդպես է:
- Տրված հարցը չհասկանալու դեպքում պետք է խնդրել, որ այն հստակեցվի:
- Պետք չէ նեղսրտել, եթե Ձեզ թվա, որ նույն հարցերը մի քանի անգամ են տրվում կամ երբ Ձեր հայտնածի վերաբերյալ ճշտումներ են կատարում կամ պարզաբանում խնդրում: Դրա նպատակը Ձեր իրավիճակի մասին հնարավորինս լիարժեք պատկերացում կազմելն է:

Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել հարցազրույցի ընթացքում

- Անհրաժեշտ է մինչև հարցազրույցը ձեռք բերել Ձեր ինքնությունը, Ձեզ հետ տեղի ունեցածը և Ձեր վախերը հիմնավորող բոլոր հնարավոր փաստաթղթերը և նյութերը (այդ թվում՝ լուսանկարներ, տեսանյութեր, հրապարակումներ) և ներկայացնել հարցազրույցի ժամանակ, եթե ավելի վաղ չեք ներկայացրել: